բան է այն տպաւորութիւնը կամ այն զգացմունքը պատմել, որը կունենայ առաջին անգամ երկրաշարժութիւն տեսնող մարդը։ Մարդը յանկարծ շփոթւում է, վասն զի նա այն գաղափարն ունէր, որ երկիրս անշարժ է, և այս գաղափարը իւր նեցուկն կամ առաւել լաւ ասած՝ իւր պաշտպանութիւնն էր։ Երկրաշարժութիւնը երեք տեսակ է լինում. Նախ՝ երկիրը կշարժի ծովու ալեաց պէս. երկրորդ՝ որ յանկարծ երկիրը կբարձրանայ. և երրորդ՝ ամենասաստիկն և սարսափելին է որ այս վերըյիշեալ երկու տեսակ շարժը իրարու հետ կխառնուին, և այս իրարու հետ խառնուած շարժի ժամանակ՝ առաջին տեսակ շարժը իւր ալիքը միշտ զանազան կողմէր կփոխէ. այս տեսակ երկու շարժից քանդուեց Եւրոպայում Լիզբոն Փորթուգալի մայրաքաղաքը 1755 Թ.

Առաւել սաստիկ էր երկրաշարժութիւնը Ամերիկոյ Ռիոպամպի քաղաքի քանդուելուն. Այնտեղ ալիքը ցածանում էին, յետոյ ուղիղ էին գնում, վերջը սաստիկ զօրութեամբ հալած մարմինը դուրս էր թափում. այս տեսակ շարժից բոլոր տները քանդուեցան և դաշտերը շուր անցան։ Այս շարժը այնպէս խառն էր, որ մէկ տան կայքը՝ այլոց տանը կգտնէին փորելու ժամանակ։ Ստորերկրեայ ձայնը (ճիչը)՝ երկրաշարժութիւն կգուշակէ, այն եւս ոչ միշտ։ Ինչպէս Ամերիկայում Հուանահուաթի բնակիչք, ստորերկրեայ ձայնից՝ որը մէկ ամիս տևեց, այնպէս վախեցած էին, որ քաղաքը թողին և մերձակայ գիւղօրէից մէջ բնակուեցան. բայց երկրաշարժութիւն չպատահեց։ Շատերը կաշխատէին՝ որ օդի փոփոխութեամբ կարողանան իմանալ՝ թէ երբ կլինի երկրաշարժութիւն, բայց չկարողացան։ Ծովը երկրաշարժի ժամանակ սարսափելի տեսարան կձևացնէ. ջուրը բարձրանալով մերձակայ տեղերը բոլորովին կծածկէ։ Լիսբոնի երկրաշարժի ժամանակ՝ ծովը 40 ոտնաչափ (ֆութ) բարձրացաւ. Քաթիկս քաղաքի մօտ էլ (Սպանիայում) 60 ֆութ. Փէրույի (Հար. Ամր.) երկրաշարժի ժամանակ՝ 80 ֆութ բարձրացաւ։ Կպատմեն թէ Լիսբոնի երկրաշարժից 700.000 մղոն տարածութեան վերայ շարժը ներգործեց. Ի թիւս որոց շարժեց Անգլիան, Շուեդի եզերքը, Անթիլեան կղզեր, Կանադան (Հիւս. Ամր) և արևմտեան Մարօքքան (Հիւս. Ափր.)։ Այս երկրաշարժից 60.000 մարդ զոհ եղաւ։ Շատ անգամ էլ երկրաշարժից յետոյ երկիրը իւր նախկին ձևը կփոխէ՝ ինչպէս Չիլիի եզերքը (Հար. Ամր.) 1822 և 23 Թ. բարձրացաւ։ Ինդոս գետի արևելեան եզերքը երկրաշարժից 10 ոտնաչափ բարձրացաւ։ Երբեմն էլ այնպէս կպատահի, որ աճազին տարածութիւնը իւր ձևը կփոխէ։ Կան այնպիսի տեղեր, որ ամենեւին շարժ չէ պատահած՝ որպէս Հոլանդայում, Հիւս. Գերմանիայում, Հիւս. և միջին Ռուսիայում, Հիւս. Սիպերիայում, Աֆրիկէի եզերաց մօտ Տրիպոլիսից մինչև Նեղոս գետը, և Հարաւային Աֆրիկէում, Հիւս. Ամերիկոյ միացեալ նահանգաց մէկ մասին մէջ և Հարաւային Ամերիկոյ արևելեան եզերաց հարաւակողմը։ Սոցա բացառութեան պատճառը յայտնի չէ։

(Շարունակելի)

Առաք Սարգ. Գ. Սարգէնեանց։

Նախարարութեան մէջ։ 1840 նշանակուեց ի Վիէննայ Դեսպան, ուր որ ներկայ գտնուեց Պրագայի եւ Շատիլլիոնի ժողովոց մէջ, նոյնպէս փարիզու դաշնակցութեան ժամանակ Վիէննայի ժողովքում։ Հաւրոյոր 1816 Թ. փոխարքայութեամբ նշանակուեց Թագաւորական խորհրդարանի անդամ եւ գնաց նախ ի Լոնդոն Դեսպան, յետոյ Մ.Բէռ. 1819 Թ. վերադառնալով ի Պետրն. Նախարար կարգուեց, բայց շուտով հրաժարուեց եւ սկսեց որդեգրել դպրոցի 1825 Թ. փարիզու Ակադեմիայի անդամ նշանակուեց. իսկ 1850 Թ. ա[illegible] [illegible] Պրուսաց եւ Արծիւ շքանշանի, եւ յետ մահուան շատ գրուածքներ թողուց։

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՆԱԽԱՄԱՐԳԱՐԷՆ

Կարելի չէր ինձ տանել զրկանքը,
Որ կրում էր դուր իմ խեղճ համազգին,
Խեղճ վրդովուած վատ մարդու կեանքը
Կորուսի երկրից փախան զրկանքին.

Եւ այնուհետեւ խիստ դատաստանի
Դատի երկիւղից սաստիկ սարսափած,
Թողեցի եւ Աղդ, եւ ամէնից արքունի,
Դէպի անապատ փախչելի շտապած:

Ուր շատ տարիներ անցուցի հանգիստ,
Անապատական խեղճ կեանք վարելով,
Ուր դարձայ հովիւ, անպատանիչ, անվիշտ,
Անմեղ գառների հօտը հովուելով:

Եւ այն տեղ մի օր, երբ ես անկասկած
Արօտի վերայ կայի տարածուած,
Յանկարծ մի ահեղ Թնդիւն բարձրացաւ,
Մինչ հօտը դաշտում անհետ ցրուեցաւ . . .

Երբ լեռ շուրջ եկի, այն ինչ իմ հանդէպ
Տեսի առակալի մի մեծ տեսարան, —
Բոցավառ կրակով վառվում էր Քարեր . . .
Պատած վերևից Թուխպ ամպեր նրան:

Ամպրոպը ու փայլակ, կայծակ, հողմերը
Բացել էին մեծ պատերազմ այն տեղ . .
Կարծես դժոխքը լինէր այն տեղում.—
Կարծես աշխարհ էր այն տեղ վերջանում . . . :

Վազեցի յառաջ տեսնելու համար . . .
Ահա այն տեղից որոտաց մի ձայն,·
«Կա՛ց Եբրայեցի, կա՛ց, մի մերձենար,
«Լո՛յծ զկօշիկդ, զի սուրբ է այս վայր:»

Բոլոր անձնիս մէջ սարսափ ըզգալով
Ես բազկատարած գետնի վրայ ընկայ . . .
Հարցուցի ո՞վ ես, դողդոջուն ձայնով,
Որ այդպէս ահեղ երևիս ինձ:

Վերստին խօսեց նոյն ձայն Թնդագին . . .
«Ես եմ, որ քո հայր ի մէջ այլ ազգաց,
«Զիս ծանեան միայն ճշմարիտ Աստուած
«Զաղօթս կարդալով յԱնուն իմ յերկինս —

«Ես եմ այն Աստուած, որ քո նախահարց
«Խոստացայ զազգ ձեր առնել գերազանց.—
«Ես եմ, որ հանեալ ի յերկրէ իւրեանց
«Պանդխտացուցի յերկիրս օտարաց:

«Արդ այժմ կամիմ զնոսա հանել
Յայն գերութենէն, յորում կան նոքա.
«Քանզի սիրեցեալ իմ ազգ Իսրայէլ,
«Կրէ տառապանս սաստէն բազմակայ:

«Անօրէն իշխանքն որ յԵգիպտոսի,
«Տանջեն զնոսա ի ստրկութիւնս . . .
«Կամին բռնութեամբ եւ ապօրինի
«Պաշտել տալ զիւրեանց չարափառ կուռս:

«Այլ եւս ընդ այս քան ես ոչ համբերից,
«Այլ եւս զազգ ձեր ոչ եւս անդ թողից.
«Եհա՛ս ժամանակ, զի ազգն Իսրայէլ
«Դարձցի յերկիր իւր զօրէնսն առ պաշտել:

Արդ եկ, փութացի՛ր, ո՛վ Եբրայեցի,
«Յեգիպտոս աշխարհ դու փաղփաղակի.
«Վասն ազատութեան եղբարց համազգի,
«Խօսեա՛ աներկիւղ հանդէպ արքայի·

«Սաստեա՛, խրատեա՛ զխամամակորս,
«Ի սաստից նոցին դու մի զանգիտեր.
«Թո՛ղ հալածեսցեն նոքա զքեզ ի դուրս,
«Բայց դու անխռով ի բանս հաստատ լեր:

«Քեզ այսուհետեւ կարգեմ առաջնորդ.
«Յազգի քում լեր դու արթուն դէտ եւ տէր.
«Յիս եւ ի քոյդ ազգ, զքեզ առնեմ միջնորդ.
«Քեւ ես զԻսրայէլ ամբարձից ի վեր:

— Տէ՛ր, ես ո՛վ եմ, — ասացի իսկոյն.
— Առաքեա զայլ որ հզօր բանիբուն,—
Քանզի նոքա ինձ ոչ հաւատասցեն,
Թէ եմ իսկապէս առաքեալ ի Քէն:

Կրկնեց նոյն ձայնը — «Դու երթ. ընդ քեզ եմ . . .
«Տա՛ց քեզ ի գործել զհրաշս ամեն . . .
«Ասա՛ անդանօր յղեաց զիս Որ Էնն,
«Առ ի յուխտ հանել, յուխտ նախնեաց վսեմ . . :

«Երթ առ զԱհարոն զեղբայր քո ընդ քեզ,
«Խօսեա՛ զիմ կամս ընդ Եգիպտացիս,
«Եւ վասն եղբարց գուշակեա՛ նոցա,
«Զարմացայ քաջիս իւրեանց յայտնապէս:

«Իշխանքն աշխարհին թէ ոչ հաւանեսցին
«Առնել ըստ կամաց իմոց զերադոյն,·
«Գիտասցե՛ս, բարկութեամբ Իմով կործանեցից
«Յերեսաց երկրի սպառաժոր խստագոյն . . . :

Այս խօսքերից յետ, տիրեց լռութիւն.
Այլ եւս լսվում չէր ահաւոր ձայնը . . .
Շուտ ոտքի ելի, խռոված մթութիւն
Տեղի խաղաղ էր, այլ չէր իսկ նոյնը:

Եւ այնուհետեւ արձակ համարձակ,
Դէպի Եգիպտոս արշաւեցի շուտ.
Պատիժներով խիստ խաւարն սաստիկ
Նեղեցի սաստիկ, անյագ եւ անգութ . . . :

Մինչեւ որ ազգս բռնութեան ձեռքից
Ազատեցի եւ առաջնորդ դարձած,
Մինչեւ օրէնքներ ստացայ երկնքից . . .
Ուղղեցի ազգն իմ աշխարհն Աւետեաց . . . :

Ի Պ.պլար Յարութիւն Աստուածեան